𐭫𐭭𐭲𐭥𐭩𐭱𐭲𐭩𐭭 tandrustīh - تندرستی - առողջարարություն - здоровье тела - bodily health, health of the body.

𐭲𐭩𐭭𐭥𐭩𐭭 tanūr - تنور - թոնիր - печь - stove, an oven - арм. tonir.

𐭲𐭥𐭩𐭥𐭭 Turan - تورا - Թուրան - Туран - Turan.

𐭲𐭥𐭩𐭥𐭪𐭩𐭪 taurēč - تورێچ - զրերը թունավորող դեր անունը - имя дьявола, отравляющего воды - name of the demon who poisons the water

𐭲𐭥𐭩𐭮𐭠𐭪 tōrnak - تورنا - շան ձագ, «թուչ» - щенок - puppy

𐭲𐭩𐭪𐭪 turk - ترک - թուրք - тюрок - turk.

𐭲𐭥𐭭 tōm = 𐭲𐭥𐭭𐭢 tohm

𐭲𐭥𐭭 tōm - تاریک ظلمت - խորություն, խավար - темнота - darkness

𐭲𐭥𐭭𐭪 tōmīk - تاریک تیره - մութ, խավար - тёмный, мрачный - obscure, dark.

𐭲𐭥𐭭𐭠𐭲 [tōmanyā] hašt - هشت - ութ - восемь - eight.

𐭲𐭠𐭲𐭮𐭠𐭩 Tansar - اترنسر - Տանսար հռչակավոր հոգևոր - знаменитый мобед - a celebrated priest.

𐭲𐭥𐭮 [tōpā] sēv - سیب - խնձոր - яблоко - apple. - наз. sīw

𐭲𐭥𐭮 [tōpā] yātak (yāma) - جامه - հագուստ - одежда - dress

𐭲𐭥𐭩𐭥𐭭𐭪 tuvānīk, tuvānī - ایی - կարող, կարող - могущественный, мощный - powerful, mighty

𐭲𐭪𐭩𐭱𐭭 tōjišn - تجشن پیمان - քավություն, հոգեմաս, ապաշխարություն - искупление, раскаяние, покаяние - expiation, repentance

𐭩𐭫 tak - تک - Ի հարկե - одна штука - single, unique

𐭠𐭰𐭲𐭩𐭫 [takrōntan] saxtan - سنجیدن - կշռել - взвешивать - to weigh

𐭩𐭮 tar - خنده - ծիծաղ - смех - laughing.

𐭩𐭮 tarr - تر - խոնավ, թաց - влажный, мокрый - damp, moist.

)p tar- ترش - գարշելի, անբարոկամ, դժխոհ.- ноглый, дерзкий - disdainful, insolent, arrogant.

)p tarāz - ابریشم - մետաքս - шелк - silk.

)p tarāzēnitan - ترازیدن - կշռել - взвешивать - to weigh

1910)p tarāzūk - ترازو - յոթներորդ կենդանակերպ, կշիռ.- седьмой знак Зодиака, весы - libra, the seventh sign of Zodiac.

)p [tolbā] pīh - پیه - ճարպ, ճրագու - жир, сало - grease, fat.

)p targ - ترگ - սաղավարտ - шлем, каска - helmet.

)p tars - ترس - վախ, սի - страх, боязнь - dread, fear.

)p tarsīh " " " " " " " " " " " " "

)p tarsīnāk - ترسناک - երկչոտ, սարսափելի - страшный, устрашенный - terrible, timid, terrified.

)p tarīh - تریه - անբարոկամություն, անարգանք.- презрение, дерзость - disdain, contempt, insolence

)p tarist - ترست - դիմաց, վրա, վերև - напротив, на, над.- in front, against, over.

)p tarskaz - ترسکاز - հնազանդ, նվիրված - покорный, посвященный - obedient, devoted.

)p tarsīnāk - ترسناک - սարսափելի, վախկոտ - страшный боязливый - horrible, terrific, fierful

)p [tarin, t'rin] do - دو - երկու - два - two. ссср. dvā

)p [tarin asrya] davajdah - دوازده - տասներկու - двенадцать.- twelve

)p [tarīnōm] doom - دوم - երկրորդ - второй - second

)p tarīč - اریک دیو - դևի անուն է - имя дьявола - name of a demon

)p [tarnavarya, alkā] xrōs - خروس - աքաղաղ հեյուխ - cock.

)p tarun - ترُن - թարմ - свежий - fresh.. ср.ā tarumtar

𐬞𐬀𐬭𐬫𐬌𐬙𐬀𐬑 tarvinitan - خراب کردن - կործանել, խանդել - уничтожать, разрушать - to destroy, to break down.

𐬞𐬀𐬭𐬉𐬨𐬀𐬑 Tarōmat - اهریمن بزرگ - Որ Մեծ դեւ անուն - имя одного большого дьявола - name of a great demon

𐬞𐬎𐬭 turuś - ترش - որոտ - кислый - sour.

𐬞𐬀𐬭 [tarmon] vēnīk - بینی - քիթ - нос - nose. - av. vaenā, наз. vīm

𐬞𐬭𐬎𐬀𐬐 trsāk - ترسا - քրիստոնյա - христианин - christian

𐬞𐬀𐬭𐬯𐬀𐬐𐬀𐬯𐬀𐬵 tars - ākāsīh - ترس آگاهی - վախի գիտակցություն - сознание боязни, чувство страха - a sens of awe, conciousness of fear

𐬞𐬀𐬭𐬯𐬌𐬑 tarsītan - ترسیدن - վախենալ - бояться - dread, to be afraid

𐬞𐬎𐬀 [tlatā] sēh, sē - سه - երիք - три - three

𐬞𐬎𐬀 𐬀𐬯𐬭𐬎𐬀 [tlatā asryā] sijdeh - سیزده - տասներիք - тринадцать - thirteen

𐬞𐬎𐬀𐬉𐬙𐬀𐬎 [tlatāōm] seōm = sedikar - سوم - երրորդ - третий - third

𐬞𐬎𐬀𐬌𐬙 [tlatin] sī - سی - երեսուն - тридцать - thirty.

𐬞𐬀𐬨 tam - تاری - խոնարհություն, խավար тёмнота, мрак - gloom, darkness

𐬞𐬀𐬨𐬀𐬵 tamām - تمام - վերջ, ամբողջ - конец, целый - entire, whole

𐬞𐬀𐬨𐬉𐬵 tambūr - تنبور - թմբուկ - барабан - lute

𐬞𐬀𐬨 [tammā] ōd, ānōd (ānōy) - آنجا - այնտեղ - там - there

𐬞𐬀𐬯 [tasyā] nah - - - ինն - девять - nine

𐬞𐬀𐬯𐬀 𐬀𐬯𐬭𐬎𐬀 [tasyā asryā] navazdah - نوزده - տասնինն - девятнадцать - nineteen

𐬞𐬀𐬯𐬉𐬙𐬀𐬎 [tasyāom] nahom - نهم - իններորդ - девятый - ninth

𐬞𐬀𐬨 tap - تب - ջերմություն - лихорадка, жар - heat, fever

𐬞𐬀𐬨𐬀𐬵 tapāh - تباه، گرد، زشت - փչացած, ջեղ, տգեղ - испорченный, гадкий, жаркий - destroyed, ruined, heat.

𐬞𐬀𐬭𐬎𐬀𐬵 tavarzat - تبرزد - բյուրեղացած շաքար - кристаллический сахар - crystal sugar, sugar-kandi

𐬛𐬀𐬉𐬀𐬉𐬎𐬀𐬌 Taparistān - طبرستان - Прӣнтнӣнд Ӕрӕвӕсы - область в Иране - name of a province in Iran

𐬛𐬀𐬌𐬀𐬵 𐬵𐬀𐬍 tačāx xūn - خون تازه - цӕгъӕтӕй Хӕрф - кровавая рана - bloody wound

𐬛𐬀𐬌𐬉𐬙 tačitan - تاختن - ӕнцад цӕуын - выехать, ехать - extract, issue, to flow out - наст. вр. 3л. tačēt.

𐬛𐬀𐬌𐬀𐬀 tačāk - تاز - цӕцӕг - скорый, быстрый - swift.

𐬛𐬀𐬱𐬎 [tašyā] nah - نه - фӕлӕ - девять - nine - ав. nava.

𐬛𐬀𐬱𐬵 tašt - تشت - ӕрдӕг, «фыдӕг» - таз - a dish, a basin, a cup - ав. tašta, арм. tašt, taštak.

𐬛𐬀𐬙𐬙 tatan - تنیدن - фӕрсын, тӕхын, нывын - прясть, ткать, плести - weave, to spin.

𐬛𐬀𐬙𐬀𐬵 tatak - تک - тӕхӕнӕ, ӕдӕрӕг - покрывало, вуаль, гардероб - a curtain, any covering of cloth.

𐬛𐬀𐬙𐬀𐬉 titar - تیهو - фӕсӕуӕ - фазан - pheasant.

𐬛𐬀𐬙𐬁𐬀 [tatrā] hamin - تابستان - цӕхӕр - лето - summer

𐬛𐬀𐬙𐬁𐬀𐬙𐬀𐬌 [tatrōntan] vāritan (bāridan) - باریدن - цӕгъдын, - дождить - to rain - наз. vāritan.

𐬛𐬀𐬙𐬀𐬙𐬀𐬀 [tatmaman] tōzak (tōza) - توز - цӕвӕццӕг, цӕхӕр - щенок - puppy - ав. taurunō, наз. tōla, арм tūla.

𐬛𐬀𐬙𐬀𐬀 [tatmatā] ars (xars) - خرس - цӕг - медведь - a bear

ՊԱՀԱՊՎԵՐԵՆԻ (ՄԻՋԻՆ ՊԱՐՍԿԵՐԵՆ) ՀԱՄԱՌՈՏ ՓԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԻՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Միջին պարսկերենը, ինչպես երևում է նրա անվանումից, բոնում է հին և նոր (ժամանակակից) պարսկերեն լեզուների միջին տեղը:

Միջին պարսկերենը տարածված է եղել Աքեմենյան դինաստիայի անկման ժամանակից (IV դար մ. թ. ա.) մինչև նոր պարսկերենի կազմավորումը ընկնող ժամանակաշրջանը: Սակայն, ինչպես հայտնի է, լեզուն զարգանում և փոփոխվում է դանդաղ, ուստի և այս ժամանակաշրջանի սահմանազատումը հին և նոր շրջաններից պայմանավորված է պատմական իրողություններով, և բնականաբար պատմական արտաքին տվյալների հիման վրա սահմանված այդ ժամանակամիջոցը չի կարող համընկնել լեզվի զարգացման սահմանների հետ:

Միջին պարսկերենի այսպիսի սահմանազատման համար հիմք են հանդիսանում նախ՝ միջին պարսկերենի լեզվական ցուցանիշները, որոնք հին պարսկերենից տարբերվում են իրենց պարզությամբ, և ապա այն, որ միջին պարսկերենը արդեն մեռած լեզու է:

Ամեն մի լեզու իր երկարատև պատմական զարգացման պրոցեսում ձեռք է բերում նորանոր, մինչև այդ իրեն անծանոթ քերականական ձևեր: Այդ նոր ձևերի տարրերը արդեն սաղմնավորված են լինում հնի մեջ, որոնք աստիճանաբար զարգանալով՝ լեզվին տալիս են նոր որակ:

Այսպես, հին պարսկերենի մեջ,— որը հայտնի է իր թեքականությամբ, որտեղ քերականական կարգերն արտահայտվում էին ներքին թեքումով ու մասնիկավորումով, որտեղ մասնիկներն օրգանապես միացած էին արմատին, և հաճախ նույն մասնիկը արտահայտում էր մի քանի քերականական իմաստներ (թիվ, սեռ, հոլով և այլն), և այդ քերականական իմաստները հաճախ կարող էին արտահայտվել նաև արմատի հնչյունափոխությամբ,— արդեն վերջին շրջանում նկատվում է այդ սիստեմի

քայքայում, երբ տարբեր հոլովների վերջավորություններ նույնանում են և պահանջ են առաջադրում հոլովական իմաստներ արտահայտելու նոր միջոցի: Այստեղ արդեն հոլովական վերջավորության հետ միասին հանդես են գալիս նաև նախդիրներ ու հետդիրներ: Այսպիսով, հոլովումը գնում է դեպի պարզեցում: Տրական հոլովը այլևս առանձին գոյություն չունի. հին սեռականի ձևը ստանձնել է տրական հոլովի բոլոր ֆունկցիաները:

Ներգոյական հոլովը սովորաբար ստանում է ā-հետադրությունը (բացառությամբ հատուկ անունների):

Բացառական հոլովին հաճախ նախորդում է hača նախդիրը: Այսպիսով, նախդիրների և հետդիրների գործածությունը հրսկայական արժեք է ստանում:

Հին պարսկերենի խոնարհման մեջ ևս, որը կրում է գերազանցապես թեքական բնույթ, նկատվում է վերլուծական սիստեմին անցնելու որոշ միտում, երբ հանդես են գալիս խոնարհմանը նպաստող օժանդակ բայերը: Այսպես, օրինակ՝ պատճառական բայերը արտահայտելու համար հին պարսկերենը կորցրել է իր նախկին—aya վերջածանցը: Օրինակ՝ Քսերքսեսի կողմից Վանում թողած արձանագրության մեջ մենք տեսնում ենք հետևյալ տողերը.

„dipim naiy nipištām akunauš" «Նա գրել չտվեց արձանագրությունը». այստեղ kunau բայը օգտագործված է որպես օժանդակ բայ (հմմտ. հայերեն «գրել տալ»): Հին պարսկական արձանագրությունները, հատկապես վերջին շրջանում, այնպես խառնված են, որ զգալի է, թե քերականական սեռը իր անկման շրջանն է ապրում: Նույն անկման վիճակն է ապրում նաև երկակի թիվը:

Քերականական այդ նոր երևույթների առկայությամբ էլ բացատրվում են պարսկերենի որակական փոփոխությունները պարսից ժողովրդի պատմության տարբեր շրջաններում:

Հին պարսկերենի վերը նշած ձևաբանական նոր տենդենցները հետագայում լայնորեն տարածվեցին և փոխեցին նրա բնույթը, սկիզբ դնելով պարսկական լեզվի հաջորդ փուլին՝ միջին պարսկերենին, որը համեմատած հին պարսկերենի հետ՝ արդեն գերազանցապես վերլուծական տիպի լեզու է:

Այսպիսով, IV դարը մ. թ. ա. կարելի է համարել սկիզբը միջին պարսկերենի, որը կենդանի է եղել հավանաբար մինչև X դ. մ. թ.»

Որոշ արևելագետներ միջին պարսկերենի մեջ դիտում են զարգացման երկու շրջան. հին պահլավերենի, որը պարսիկ Արշակունյան դինաստիայի ժամանակի լեզուն է (մ. թ. ա. 256—226 մ. թ.). և նոր պահլավերենի, որը Պարսից Սասանյան դինաստիայի ժամանակի լեզուն է (226—647 թթ.):

Իրականում այս երկու շրջանների լեզուները տարբեր լեզուներ են. նրանք ներկայացնում են միջին իրանական լեզվական էպոխայի տարբեր բարբառներ, որոնցից նոր կամ սասանյան պահլավերենը Իրանի հարավ-արևմտյան, իսկ հին, պարթևական պահլավերենը կամ ուղղակի պարթևերենը Իրանի հյուսիս արևելյան բարբառն է:

Իրանագիտության մեջ երկար ժամանակ միջին պարսկերենը կոչվել և այժմ էլ կոչվում է պահլավերեն, որը ճիշտ չէ, քանի որ «պահլավերեն» բառը իր իսկական իմաստով նշանակում է պարթևերեն. Պահլավի (Pahlav) հին իրանական Parθava պարթևերենի հնչյունափոխված ձևն է· Այսպես, հին իրանական θ-ն փոխվել է h-ի (Parθav>Parhav)՝ հարաբերություն ցույց տվող «i»-ով (Parhavi): Իրանական լեզուներում օրինաչափ երևույթ է r-ի փոխվելը l-ի, ուստի Parhavi>Palhavi. ապա կատարվել է դրափոխություն Palhavi>Pahlavi (համմտ. հայերեն խստոր>>սխտոր, կապերտ>կարպետ, պարսկերեն nexr>nerx, bäfr<<bärf և այլն):

Սկզբնական շրջանում պահլավերեն բառի տակ հավանաբար հասկացվում էր հենց պարթևերեն, սակայն հետագայում, երբ միջին պարսկերենը տարածվեց Իրանի տերիտորիայում, այդ անվանումը փոխադրվեց վերջինիս վրա: Արաբական նվաճումների ժամանակաշրջանում պահլավերեն բառի սկզբնական նշանակությունը արդեն վերջնականապես մոռացված էր և այդ տերմինի տակ հասկացվում էր գերազանցապես մինչմուսուլմանական Իրանի միջին պարսկերեն լեզուն, ի տարբերություն «նոր պարսկերենի» (այսինքն՝ հենց նույն լեզվի, սակայն արդեն արաբական գրության կեղևի մեջ):

Քանի որ մինչիսլամական ժամանակաշրջանի գրականությունը ավելի ուշ շրջանի արդյունք է, քան պարթևականը, այսինքն՝ այն վերաբերում է Սասանյան ժամանակաշրջանին և քանի որ այդ շրջանի գրավոր պրոդուկցիան գրված է ոչ թե պահլավերենով (պարթևական լեզվով), այլ պարսկերենով, այն է՝ միջին պարս-

կերենով, ուստի նախաիսլամական շրջանի լեզուն իր ամբողջությամբ անվանել պահլավական՝ կլինի ոչ ճիշտ։

Խուսափելով խառնաշփոթությունից և ելնելով այս տերմինների ճիշտ գործածությունից, պարսկերեն լեզվում ճշտված է հիշյալ տերմինների գործածությունը և այժմ մինչիսլամական շրջանի պարսկերեն լեզուն կոչվում է ոչ թե զաբանե փահլավի՝ «պահլավերեն լեզու», այլ զաբանե ֆարսիյե միանե՝ «միջին պարսկերեն»։

Պարթևերեն և միջին պարսկերեն (պահլավերեն) լեզուները չափազանց նման են իրար, սակայն իրենց ընդհանրություններով հանդերձ, ունեն նաև առանձնահատկություններ, որոնցով և տարբերվում են միմյանցից։ Այս լեզուների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան առանձին բառեր և որոշ քերականական երևույթներ, որոնք հատուկ են պարթևերենին և բացակայում են միջին պարսկերենում։ Այս լեզուների ակնհայտ տարբերություններից մեկն այն է, որ միջին պարսկերենի (պահլավերենի) որոշչի և որոշյալի, ինչպես նաև հատկացուցչի և հատկացյալի կապը արտահայտող i-ն (նոր պարսկերենի իզաֆեթը) պարթևերենում բացակայում է, սակայն որոշ դեպքերում այդ կապը արտահայտվում է čē-ով[1]։ Անձնական դերանվան I դեմքը միջին պարսկերենում (պահլավերենում) mān, իսկ պարթևերենում az է։

Առկա են նաև բազմաթիվ հնչյունական տարբերություններ։ Այսպես, պարթևերենի «z»-ն համապատասխանում է պահլավերեն «d»-ին, օրինակ՝ պրթև. zan, պհլ. dan «գիտենալ», պրթև. zird, պհլ. dil «սիրտ», պրթև. s-ին համապատասխանում է պահլավերեն h-ն, օրինակ՝ պրթև. vinas, պհլ. vināh «մեղք, հանցանք», պրթև, das, պհլ. dah «տասը» և այլն։

ՄԻՋԻՆ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ինչպես ցույց է տալիս ինքը անվանումը, միջին պարսկերեն լեզուն ներկայացնում է պարսկերեն լեզվի զարգացման միջին աստիճանը։

Միջին պարսկերեն լեզվի հնագույն վիճակը մեզ հայտնի է Աքեմենյան դարաշրջանի (VI—IV դարերը մ. թ. ա.) սեպագիր արձանագրություններով։

---

1 Տե՛ս Ehsanyare Šater, Zäbanha vä lähjehae Irani, Teheran, 1336, էջ 20

Եթե չհաշվենք մեզ ավանդված պարսկական դրամների վրա հիշատակված առանձին անձնանուններն ու տիտղոսները, ապա IV դարից մ. թ. ա. մինչև մ. թ. III դարի կեսը ընկած ժամանակաշրջանի պարսկերեն լեզվի զարգացումը արտացոլող և ոչ մի նյութ մեզ չի հասել:

Այսպիսով, մեզ ավանդված չեն մոտավորապես վեց դար ընդգրկող ժամանակաշրջանի պարսկերեն լեզվի զարգացումը ցույց տվող բնութագրերը:

Եվ միայն պարսկական Սասանյան դինաստիայի հաստատումից հետո է, որ հանդես են գալիս քիչ թե շատ նշանակություն ունեցող միջին պարսկերեն լեզվի հուշարձաններ:

Միջին պարսկերենը Սասանյան դինաստիայի և տիրող զրադաշտական եկեղեցու պետական ու պաշտոնական լեզուն էր: Այդ ժամանակաշրջանում ստեղծվեց ընդարձակ կրոնական և աշխարհիկ բնույթի գրականություն:

Միջին պարսկերենը ավանդված է մեզ զանազան արձանագրություններով ու գրքերով:

Սասանյան թագավորներ Արդեշիր Պապականը (224—241 թթ.), Շապուհ I-ը (241—272 թթ.) թողել են մի շարք արձանագրություններ, որոնք կենտրոնացված են Նաղշե Ռոստամում, Նաղշե Ռաջաբում և Հաջիաբադում:

Մեզ ավանդված է նաև Ներսեհի (293—302 թթ.) թողած արձանագրությունը Փայքուլիում, որը հայտնաբերվեց 1836 թ. Գ. Ռաուլինսոնի կողմից, Իրաքում, Իրանի սահմանային Ղասրե—Շիրին և Իրաքի Սուլեյմանիյե քաղաքների միջև ընկած Բան Հեյլան քրդական մի գյուղի մոտ:

Ռաուլինսոնը 1868 թ. հրատարակեց այդ արձանագրության առանձին ֆրագմենտներ, սակայն ցավոք այդ արձանագրությունը շատ վատ է պահպանվել և նրա առանձին մասերը կամ դժվար են ենթարկվում վերծանման, կամ էլ նրանց ընթերցումը մնում է վիճելի:

Նշված արձանագրությունը գրված է երկու լեզուներով՝ միջին պարսկերեն ու պարթևերեն, և պատմական մեծ արժեք է ներկայացնում, քանի որ այդ արձանագրությունը կարևոր նյութեր է պարունակում մ. թ. III—VI դ.դ. պատմական դեպքերի մասին: Այստեղ հիշատակություններ կան պարսիկների, պարթևների, խորեզմցիների, սակերի և այլոց մասին:

Արձանագրություններ է թողել նաև Շապուհ II-ը (309—

379 թթ.), Շապուհ III-ը (383—388 թ.)՝ Թաղե Բոսթանի ռելիեֆի վրա։

Նշված արձանագրությունները գերազանցապես փոքրածավալ են և լավ չեն պահպանված։

Սովորաբար նրանք բովանդակում են անձնանուններ, տիտղոսներ և որոշ դեպքերում՝ սասանյան թագավորների սերնդաբանությունը։ Այս արձանագրությունները փորագրված են երկու տարբեր գրություններով՝ միջին պարսկերեն և պարթևերեն լեզուներով։

Նշված արձանագրություններից հնագույնը Արտաշիր Պապականի արձանագրությունն է, որը գրված է պարթևերեն, միջին պարսկերեն, ինչպես նաև հունարեն լեզուներով։ Իրեք լեզվյան է նաև Շապուհ I-ի արձանագրությունը։

Այս արձանագրությունները ընդօրինակվել են՝ սկսած XVII դարից։ Գլխավոր ընդօրինակողները եղել են Ֆլաուերը, Շարդենը, Նիբուրը, Քեր Պորտերը, Աուսլեյը, Վեստերգարդը, բայց հատկապես Ֆլանդենը և Քոստը։

XVIII դարի վերջում Արտաշիր Պապականի ու Շապուհ I-ի Նաղշե Ռոստամի և Նաղշե Ռաջաբի արձանագրությունների առաջին ընդօրինակությունների (պատճենումների) հիման վրա տեղի ունեցավ այդ արձանագրությունների վերծանման դժվարին գործը։ Այդ վաստակը պատկանում է ֆրանսիական հռչակավոր արևելագետ՝ Սիլվիեստր դե Սասիին[1]։

XX դարի սկզբներին հայտնի դարձած Սասանյան արձանագրությունները լուսանկարներով հանդերձ հրատարակվեցին է. Հերցֆելդի կողմից[2]. հայտնաբերված են նաև առանձին կարճ գրություններով կամ առանձին բառերով ծածկված դրամներ ու զանազան արծաթե ամաններ, որոնք, սակայն, արժեքավոր նյութեր չեն պարունակում։ Բացի նշվածից, մեզ ավանդված են նաև մանիքեական գրությամբ միջին պարսկական բնագրեր, որոնք գտնվեցին Թուրֆանում (Չինական Թուրքեստան)։

Արձանագրություններին հետևում է սասանյան գրականությունը, որը գերազանցապես կրոնական է։ Նա, սակայն, բազմակողմանի է եղել VII դարում և խոշոր կորուստներ է կրել արաբական արշավանքի ժամանակ, որից բնականաբար ազատվել են

---

[1] S. de Sasy, Mèmoires sur diverses andiquite's de la Perse, Paris, 1793.

[2] E. Herzfeld, Paikuli, Monument and inscription of the early history of the Sasanian empire, Bd I—II, Berlin, 1924.

գլխավորապես կրոնական գրքերը, որ պարսիկ զրադաշտականները փախչելով մուսուլմանների հալածանքից՝ հետները տարել են Հնդկաստան և պահպանել այն։

Մեզ ավանդված այդ ժամանակաշրջանի միջին պարսկական գրականությունը պարունակում է թարգմանական, միջին պարսկական՝ կրոնական, այլև աշխարհիկ թեմայով գրված նյութեր։

Միջին պարսկերենի թարգմանական գրականության մեջ մրտնում են հիմնականում ավեստայի առանձին մասերի թարգմանությունները, ինչպես Վենդիդատի, Յասնայի, Նեյրանգեստանի, Վշտասպ Յաշտի, Վիսպերեդի և այլն ու նրանց մեկնությունները՝ թվով 141 000 բառ։

Կրոնական գրականության մեջ կարևորագույն տեղ են գրավում Բունդահեշնը կամ Բոնդհոշենը՝ 13 000 բառ, աշխարհի ստեղծագործության գիրքը, որը ներկայացնում է մի զրադաշտական հանրագիտարան, պարունակելով կոսմոգոնիական և այլ տեղեկություններ, վերցրած հնագույն ավանդություններից, և ունի երկու խմբագրություն՝ պարսկական և հնդկական։

Իրանական Բոնդհոշենը բաղկացած է 46 գլուխներից, որոնցից առաջինը պատմում է Ահրամազդի, Ահրամանի և ստեղծագործության մասին, մյուս գլուխները պատմում են այն տիեզերական ռազմի մասին, որ չար ոգու դեմ մղում են երկնքի ոգին, ջուրը, երկիրը, բույսերը, նախնական եզը։ Ապա մենք հանդիպում ենք երկրների, լեռների, ծովերի, գետերի և լճերի, այլև կենդանիների բնության, որոնց մեջ խոշոր դեր է խաղում կապիկը։ Խոսվում է կրակի բնության մասին, օդերևութաբանական երևույթների, այն մասին, թե անձրևի հետ ընկնում են քարեր, ձկներ, գորտեր, Չար ոգու ստեղծագործությունների՝ օձերի, կարիճների, կատուների, մրջյունների, ճանճերի, մեղուների և այլնի, Իրանի նշանավոր նահանգների և այն աղետների մասին, որ տեղի են ունենում Իրանում յուրաքանչյուր հազարամյակում և այլն։

Արտավիրաֆ նամակ («Արտավիրաֆի գիրք»), 8800 բառ. ներկայացնում է աստվածավախ քուրմ Վիրաֆի ճանապարհորդությունը արքայության ու դժոխք և այդ ճանապարհորդության նկարագրությունը մոգերի համար։ Գրքում զրադաշտական ոգով, խիստ ոճով երկար խոսվում է մեղավորների և նրանց պատիժների մասին։ Միջին պարսկական կրոնական գրականության մեջ այս երկը գեղարվեստական տեսակետից բարձր տեղ է գրավում։ Միջին պարսկերենի այս կոթողը կատարյալ բարեխղճությամբ ու նյութի հազվագյուտ իմացությամբ հայերեն թարգմանել ու ծանո-

թագրել է բազմավաստակ իրանագետ, հանգուցյալ պրոֆ. Ռ. Աբրահամյանը[1]։

Միջին պարսկական կրոնական և առհասարակ միջին պարսկական գրականության ամենախոշոր երկը ըստ ծավալի Ինկարտն է, որից մնացել են III—IX գրքերը։ Սա մի ընդարձակ ժողովածու է, որ պարունակում է տեղեկություններ զրադաշտական վարդապետության, ավանդությունների, սովորույթների, պատմության և գրականության մասին։

Կրոնական գրականության մյուս հիշատակարանները են՝ «Ռեվայաթներ» (Ավանդություններ), «Մանաշչիհարի ճամակները». «Ջամասպ ճամակ», «Անդարձի Աթուրպատի, Մարսպանդան», Պանդնամակներ (խրատագրքեր), «Յոթ Ամիշասպենդների ոտեղծելը» և այլն։

Մեզ ավանդված միջին պարսկական աշխարհիկ բովանդակությամբ գրականությունը ծավալով ամենափոքրն է, ընդամենը 41 000 բառ, սակայն արժեքով, իհարկե, ամենամեծը։ Այստեղ կարևորագույնն է Քարնամակի Արտախշիրի Պապական (5600 բառ) պատմական վեպը՝ Արտաշիր Պապականի մասին, որը թարգմանված է զանազան եվրոպական լեզուներով. նաև հայերեն՝ Թիրիաքյանի թարգմանությամբ։

Այս հիանալի պատմավեպը պատմում է այն դեպքերի մասին, որոնք կապված են Արշակունյաց պարթևական դինաստիայի անկման, Սասանյան դինաստիայի հաստատման և նրա հիմնադիր Արտաշիր Պապականի իշխանության գլուխ անցնելու հետ։

Այստեղ պատմվում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո Իրանում կար 240 իշխանություն, դրանց մեջ ամենանշանավորը Արտավանինն էր։ Պապականը մարզպան էր, իսկ Ֆարսի Շահրիյարն ու տիրապետը ենթարկվում էր Արտավանին։

Սասանը, որ սերում էր Դարեհից, Պապակի հովիվն էր։ Պապակը իր աղջկան տալիս է Սասանին. ծնվում է Արտաշիրը, որ կանչվում է Արտավանի կողմից։ Մի օր որսի ժամանակ Արտաշիրը կռվում է թագավորի որդու հետ, որի համար աշխատանքի է դատապարտվում գոմում։ Նա հանդիպում է արքայի նաժիշտներից մեկին։ Վերջինս սիրահարվում է Արտաշիրին և նրա հետ փախչում Ֆարս։

Արտավանը այդ իմանալով, հետապնդում է նրան, սակայն

---

[1] Տե՛ս Արտա Վիր Նամակ, Յուշոտ Ձրիան, պրոֆ. Ռ. Թ. Աբրահամյանի թարգմանությամբ ու ծանոթագրությամբ, Երևան, 1958։

Արտաշիրը ազատվում է և մնում անվնաս, զորանում և ապա պատերազմի ելնում Արտավանի դեմ: Սպանում է Արտավանին և ամուսնանում նրա աղջկա հետ:

Այս է պատմավեպի հիմնական սյուժեն: Վեպում այնուհետև մի քանի տեղեկություններ են տրվում Արտաշիրի որդի Շապուհի, նրա թոռան՝ Հորմոզդի մասին, այն մասին, թե ինչպես Հորմոզդը ստեղծեց Իրանի միասնական իշխանություն և Հռոմից ու Հնդկաստանից տուրք պահանջեց:

Այս պատմավեպում իրական պատմական կորիզը, սերտորեն միահյուսվում է այդ հնագույն ժամանակաշրջանում գոյություն ունեցող ավանդությունների հետ:

«Յադգարի Զարիրան» («Զարիրի հիշատակը») մի այլ պատմական վեպ է, պարունակում է 3000 բառ, որը հայտնի է նաև Գոշթասպյան շահնամե կամ Փահլավի շահնամե անունով:

Սա այն պատերազմի նկարագրությունն է, որ տեղի է ունեցել Խիոնների թագավոր Արջասպի և Իրանի Վիշթասպ թագավորի միջև, դրա պատճառը Վիշթասպի զրադաշտական կրոն ընդունելը հանդիսացավ: Այս կռվում հաղթեցին պարսիկները, բայց նրանք այդ պատերազմում տվեցին մեծ թվով զոհեր, ընկան նրանց հերոսների մեծ մասը: Վեպի սիրված հերոսն է Զարիրը:

«Յադգարի Զարիրան» պատմավեպի բառապաշարում նկատվում են այնպիսի տարրեր, որոնք հատուկ են պարթևերեն լեզվին: Այդ հանգամանքը հիմք է տվել որոշ արևելագետների ենթադրելու, որ վեպը նախապես գրված է եղել պարթևական լեզվով և միայն հետագայում՝ Սասանյանների ժամանակաշրջանում, վերապատմվել ու գրի է առնվել միջին պարսկերենով:

Մյուս աշխարհիկ երկերից է Մատիհանի չաթրանգ կամ Չաթրանգ նամակ (Ճատրաքագիրք)—պատմվածք շախմատի մասին, որը պարունակում է 820 բառ: Սրա համառոտ բովանդակությունը հետևյալն է.

Հնդկաստանի թագավոր Դեվասարմը Սասանյան Խոսրով Անուշիրվան թագավորին ուղարկում է ընծաներ, որոնց մեջ և մի Ճատրակ (շախմատ) ու հարց է դնում՝ կա՛մ լուծել այդ խաղի գաղտնիքը, կա՛մ հարկ վճարել: Անուշիրվանի վեզիր Բոզորգմեհրը 3 օրվա ընթացքում վերլուծելով խաղը, բացատրում է այն և միաժամանակ, դրան ի պատասխան, հնարում է նարդին և բազում ընծաներով ուղարկում Հնդկաստան: Սակայն Հնդկաստանում նարդախաղը բացատրվում է 40 օրից հետո և Դեվասարմ թագավորը

ստիպված է լինում տուրք վճարել[1]: Մյուսը Շահրաստանիհայե էրանշահր (Իրանի քաղաքները) 880 բառ պարունակող մի գրքույկ է՝ Իրանի քաղաքների և նրանց հիմնադիրների մասին, որ մեծ արժեք է ներկայացնում հին Իրանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության բնագավառում: Այս տեքստում հիշատակված են մոտ 110 քաղաքներ՝ իրենց հիմնադիրներով, որոնցից վերջինը Բաղդադն է:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում բանավեճի ձևով կառուցված Դրախթե ասուրիֆ ու բուզ—Ասորական ծառը (Արմավենին ու այծը) պոեմը:

Պոեմում, կատակի ձևով, շարադրվում է արմավենու և այծի միջև տեղի ունեցած վիճաբանությունը այն մասին, թե իրենցից ո՛ր մեկն է մարդու համար ավելի օգտակար:

Իր մոտիվներով պոեմը մոտենում է ժողովրդական պոեզիային, նրա մեջ զգացվում է ժողովրդական կյանքի արձագանքը:

Այս պոեմը նույնպես Յադքարի Զարիրանի նման նախապես շարադրված է եղել պարթևերեն և միայն հետագայում՝ սասանյանների շրջանում ենթարկվել է լեզվական մշակման և պարսկալեզու խմբագիրների ջանքերով «պարսկականացել» ու դարձել է միջին պարսկերեն: Սակայն սրա մեջ ևս եղած պարթևական տարրերի առատությունը առիթ է տվել որոշ արևելագետների՝ այդ ստեղծագործությունը համարելու պարթևերեն[2]:

Հիշատակության արժանի են նաև Ֆարհանգի Պահլավիկ, այսինքն՝ պահլավերենի բառարան, 1300 պահլավական բառեր պարունակող բառագիրք և Խվաթայճամակ (Տերերի գիրքը), որը հետագայում նյութ ծառայեց Ֆիրդուսու «Շահնամեյի» համար և այլն:

Մեզ ավանդված միջին պարսկական գրականությունը, իբրև մնացորդ երբեմնի ծաղկած գրականության, աննշան չէ: Եվ զարմանալի է, թե այդ տարօրինակ այբուբենով, գրությամբ ու բառակազմով՝ միջին պարսկերեն լեզուն ինչպես է այդքան զարգացել ու առաջադիմել:

Միջին պարսկական գրականության հուշարձանները լեզվական հարուստ նյութ են պարունակում: Այս նյութերի շնորհիվ մենք գաղափար ենք կազմում միջին պարսկերենի բառապաշարի և քերականական կառուցվածքի մասին:

---

[1] Տե՛ս Орбели И. А. и Тревер К. В., Шатранг, книга о шахматах, Л, 1936: Տե՛ս նաև Ռ. Աբրահամյան, Իրանական լեզուները, «Լույս», Գրական գիտական հանդես, 1943, № 1:

[2] Տե՛ս Mälek-ol-Śoarae Bahar, Säbkśenasi, I, Teheran.

Այդ բնագրերը մեծ արժեք են ներկայացնում նաև պարսկական ու տաջիկական գրականության պատմության ուսումնասիրության համար, քանի որ Ֆիրդուսու ժամանակաշրջանի գեղարվեստական գրականության ակունքները շատ դեպքերում սկիզբ են առնում միջին պարսկերեն լեզվի գրական աղբյուրից:

Միջին պարսկական գրականության հուշարձանները արտակարգ կարևոր են նաև տվյալ դարաշրջանի պատմության և կուլտուրայի ուսումնասիրության համար:

Միջին պարսկական գրականության մասին գրվել են մի շարք գիտական ակնարկներ. դրանցից լավագույնը պատկանում է Վեստին[1], ավելի ուշ շրջանում Թավադիյային[2]:

Միջին պարսկական գրական հուշարձանները մեծ մասամբ ուսումնասիրված ու հրատարակված են արևելագետների կողմից: Հատկապես ուշագրավ են այս բնագավառում Նիբերգի՝ միջին պարսկերեն տեքստերի քրեստոմատիան՝ իր բառագրքով[3], ռուս արևելագիտության կարկառուն ներկայացուցիչ Զալեմանի միջին պարսկերեն լեզվի քերականությունը, որտեղ զետեղված է նաև գաղափարագրերի ցուցակ[4], Յունկերի Frahang î Pahlavik-ը, ուր կարելի է գտնել հուզվարեշ բառերի լուծումը և նրանց իրանական համարժեքները, Դին Մոհամմեդի ընդարձակ քերականությունը[5]:

Պահլավագիտության մեջ իր ուրույն տեղն ունի և իր լուման է մուծել նաև հայ բանասիրական մտքի ներկայացուցիչ, բազմահմուտ պահլավագետ հանգուցյալ պրոֆ. Ռ. Աբրահամյանը, որի գրչին են պատկանում ինչպես ուսումնական նպատակներով կազմված միջին պարսկերենի դասագիրքը[6], այնպես և գիտահե-

---

1 E. W. West, Pahlavi literature (Grundriss d. Ir. Ph), Strassburg, 1895—1901.

2 S. C. Tavadia, Die Mittelpersische sprache und literatur der Zarethustrier, Leipzig, 1956.

3 H. S. Nyberg., Hilfsbuch des Pehlevi, Bd I-II, Uppsala 1928—31

4 Saleman C. Mittelpersisch, Grund. Iran. Ph. Bd I Abt. I, Strassburg, 1895—1901, էջ 249—332:

5 Din Mohämäd—Dasture Pahlavi.

6 R. Abrahamian, Rahnämaje Zäbane Pählävi. *Ուղեցույց պահլավերեն լեզվի (պարսկերեն լեզվով), Թեհրան, 1937:*

տազոտական բնույթի շատ արժեքավոր աշխատություններ[1] և վերջապես ներկա հինգլեզվյան բառարանը։

ՊԱՀԼԱՎԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջին պարսկերեն գրքերի լեզուն խիստ անկանոն է՝ խճողված սեմական, հատկապես արամեական բազմաթիվ բառերով։ Այդ բառերը նման չեն այլ լեզուների օտար բառերին, որոնք լրացնում են լեզվում բացակայող ոչ հիմնական բառապաշարը։

Այստեղ ամենահիմնական գաղափարները արտահայտված են արամեական բառերով, որոնց սովորաբար կցվում են պահլավական ածանցներ և կազմում արտառոց ձևեր։

Արամեական բառերը գրվում էին սեմական արտահայտության համաձայն, բայց կարդացվում էին միջին պարսկերեն, որը մեծ դժվարություններ էր առաջացնում միջին պարսկերենի ընթերցման գործում։ Այսպես, օրինակ՝ xiya (արաբ. xiyya), որը թեև այսպես էր գրվում, բայց միջին պարսկերենով կարդացվում էր jan «կյանք». kaδbā (արաբ. kaδba) կարդացվում էր druk «սուտ». gāmla (արաբ. gāmäl) կարդացվում էր uštor «ուղտ». berta (արաբ. bant) կարդացվում էր duxtar «աղջիկ»։

Այս ձևով էին արտահայտվում նաև որոշ մասնիկներ և նախադրություններ. այսպես, միջին պարսկերենի hač, az բացառականի նախդիրը արտահայտելու համար գործածվում էր արամեական min նախդիրը՝ նույն իմաստով։ Միջին պարսկերենի ժխտական ne նախամասնիկը փոխարինվում էր արամեական lā-ով։ Վերցնում էին մի սեմական արմատ և կցելով նրան իրանական վերջավորություններ, կազմում բայ. օրինակ khafar-un-tan «փորել» (արաբ. hafr+իրանական—tan վերջավորությունը), սակայն այն կարդում էին միջին պարսկերեն kandan. գրում էին yatuntan, «գալ», azaluntan «գնալ» և կարդում էին āmatan. šutan:

Միջին պարսկերենի այսպիսի օտարախառն գրությունը կոչվում էր հուզվարեշ։

Հուզվարեշը չէր սահմանափակվում այս ձևերով՝ միայն պարզ բառերի գրությամբ. նույն ձևով էին գրվում նաև որոշ բարդ բառեր. օրինակ՝ malkānmalka, որը թեև այսպես էր գրվում, բայց կարդացվում էր šāhānšāh.

Այս սեմական (արամեական) բառերը, որոնք այդքան առատ

---

[1] Ռ. Աբրահամյան, Պահլավերեն անհայտ բառերի ընթերցումը։ Հայկ. ՍՍՌ ԳԱ Աշխատությունների ժողովածու, հ. 3, 1948։

ներթափանցված են միջին պարսկական տեքստերի մեջ, առաջին հայացքից այնպիսի տպավորություն են թողնում, թե տեքստը գրված է կարծես ինչ-որ խառնված լեզվով, որ կազմված է մասամբ իրանական և մասամբ սեմական տարրերից:

Այս հանգամանքը առիթ է հանդիսացել, որ որոշ արևմտաեվրոպական գիտնականներ հայտնել են այն միտքը, որի համաձայն, իբր միջին պարսկական բնագրերը գրված են ինչ-որ խառնված՝ իրանա-սեմական լեզվով:

Սակայն արդեն վաղ շրջանի արաբալեզու հեղինակները ծանոթ են եղել միջին պարսկերենի տեքստերի ճիշտ ընթերցմանը: Իբն-օլ-Մողաֆֆան (VIII դ.) վկայում է. «Նրանք (պարսիկները) ունեն հատուկ գրության ձև, որը կոչում են զավարիշ (միջին պարսկերեն uzvāriš— «բացատրություն, մեկնություն»). եթե, օրինակ, որևէ մեկը ցանկանում է գրել gōšt, որ նշանակում է «միս», ապա նա գրում է bisra (արամերեն նշանակում է միս), սակայն արտասանում է gōšt, կամ էլ եթե նա ցանկանում է գրել nān այսինքն՝ «հաց», նա գրում է lahmā (արամերեն նշանակում է «հաց»), սակայն կարդում է nān...»:

Համարյա նույն բացատրությունն է տալիս Իբն-օլ-Նադիմը «Ալֆեհրեսթ»-ում, որտեղ խոսում է հին իրանական գրությունների մասին: Հանրագիտարանի բնույթի Ֆարհանգե Ջեհանգիրի բառարանում բերված է հետևյալ բացատրությունը. «Զավարեշը գրության մի տեսակ է, որով մի շարք բառեր, որոնց թիվը անցնում է հազարից, գրում էին արամերեն, սակայն կարդալու ժամանակ դրանք փոխարինում էին պահլավական բառերով»:

Իբն-օլ-Նադիմի «Ալֆեհրեստ»-ում բերված բացատրությունը պահլավերեն գաղափարագրերի առկայության մասին առաջին անգամ ուշադրության է արժանացել 1835 թ. ֆրանսիացի գիտնական Քաթերմիարի, ապա Ն. Վեստերգարդի, Թ. Նոլդեկեի և ուրիշների կողմից: Սակայն այս տեսակետը իր լրիվ զարգացումը ստացավ միայն Կ. Զալեմանի աշխատություններում: Կ. Զալեմանը իր աշխատություններից մեկում գրում էր. «...Պահլավական տեքստերը, լինելով զուտ պարսկական, մեծ մասամբ գրվում էին գաղափարագրերի դեր կատարող, ինչ-որ սեմական բարբառի բառերով: Այս հնարանքի գյուտարարները գրում էին սեմերեն (արամերեն), սակայն կարդում էին պարսկերեն»[1]:

---

1 Տե՛ս К. Залеман. Очерк истории древнеперсидской или иранской литературы („Всеобщая история литературы" под ред. В. Ф. Корша, вып. 1, 1880).

Եվ, վերջապես, Կ. Զալեմանն էր, որ պահլավական տեքստերի տրանսլիտերացիայի ու տառադարձության սիստեմ մշակեց։

ՄԻՋԻՆ ՊԱՐՍԿԵՐԵՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Միջին պարսկերենը ունի երկու գրություն. մեկը գործ էր ածվում արձանագրությունների մեջ, իսկ մյուսը՝ գրքերի։ Արձանագրություններում գործածվող գրությունը շատ ավելի պարզ է։

Բոլոր միջին պարսկական՝ թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ բովանդակությամբ բնագրերը գրված են գրության հատուկ սիստեմով, որը հայտնի է «գրքային պահլավերեն» կամ ուղղակի «պահլավական» գրություն անունով։

Միջին պարսկերենի, այսպես կոչված, «պահլավական» գրությունը շատ անկատար է, և յուրաքանչյուր բառ տեղի է տալիս սխալ ընթերցումների։

Միջին պարսկերենի այբուբենը կազմված է 22 նշաններից, որոնցից երեքը հանդիպում են միայն գաղափարագրերի մեջ։ Սակայն միջին պարսկերենի հնչյունները շատ ավելի էին, քան այդ հնչյունները արտահայտող պահլավական տառերը։ Ուստի և որոշ տառեր արդեն սկզբից ևեթ ստանձնել էին մի քանի հնչյուն արտահայտելու ֆունկցիա։ Այսպես ⌣ս-ը ոչ միայն արտահայտում է a հնչյունը, այլ նաև h, x, ä; ⌣ն-p-ի նշանն է, բայց և f, ինչպես նաև v-է, l-ն արտահայտում է v, n, l, r և այլն։

Ինչ վերաբերում է ձայնավորներին, ապա սեմական գրության առանձնահատկություններից է հանդիսանում այն, որ առանձին տառերի նշանակություն կարող են ցույց տալ միայն բաղաձայն և երկար ձայնավորները։ Կարճ ձայնավորները ցույց տալու համար գոյություն ունեն հատուկ նիշեր, որոնք, սակայն, հաճախ չեն գրվում։

Պահլավական գրության մեջ կարճ ձայնավորները ընդհանրապես չեն գրվում. ինչ վերաբերում է երկար ձայնավորներ ā. ī, ē, ō, ū-ին, ապա դրանք արտահայտվում են այնպիսի տառերի միջոցով, որոնք միաժամանակ ծառայում են բաղաձայնների դրսևորման համար։ Երբեմն այդ նույն տառերով նշանակվում են նույնիսկ կարճ ձայնավոր հնչյունները։

Հենց այդ էլ առաջացնում է պահլավերենի ընթերցման դժվարությունը. այսպես՝ մի բառ հաճախ ունի մի քանի ընթերցումներ. օրինակ՝),, բառը կարելի է կարդալ sar, dil, dir, gil և այլն։

Պահլավերենի գրության տառերը, որոնք ընթանում են աջից դեպի ձախ, բացի մի քանիսից, ազատ չեն մնում, այլ միանում են խոլթյան, նմանվում են այբուբենում արդեն իսկ գոյություն ունեցող (իրար չեն միանում միայն մի քանի տառեր)։ Սակայն գրության և ընթերցման գործը շատ ավելի է դժվարացնում մի հանգամանք ևս, այն, որ տառերը իրար կցվելիս, ենթարկվելով ձևափոխության, նմանվում են այբուբենում արդեն իսկ գոյություն ունեցող որևէ տառի։ Այսպես՝ ◡ (y, i) և ◡ (ä, ā, h, x) տառերը իրար կցվելով տալիս են ◡ U ձևը, որ š-ի նշանն է։

ՄԻՋԻՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ



ՄԻՋԻՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջին պարսկերենի գրությունը տարբերվում է թե՛ հին պարսկերենի և թե՛ նոր պարսկերենի գրության սիստեմներից։ Ինչ վերաբերում է հնչյունական համակարգին, ապա ընդհանրապես ամեն մի լեզու յուր զարգացման տվյալ շրջանում ունի տվյալ հրն-



չյունական սիստեմը։ Օրինակ՝ غ, ع, ظ, ط, ص, ض, ح և ոմանց կարծիքով նաև ق հնում գոյություն չեն ունեցել պարսկերեն լեզվում։

Մյուս կողմից՝ ڤ, ژ, چ, پ պարսկերենի հնչյունները չեն եղել արաբերենում կամ ձ հնչյունը, որ կա հայերենում, չկա պարսկերենում։ «ا» հնչյունը հին պարսկերենում և Ավեստայում գոյություն չի ունեցել, սակայն այժմ կա ժամանակակից պարսկերենում։

Նշանակում է՝ յուրաքանչյուր լեզու իր զարգացման ընթացքում ստեղծել է իրեն հատուկ հնչյուններ, որոնց ամբողջությունը կազմում է լեզվի արտասանական բազան։ Սակայն լեզվի արտասանական բազան փոփոխվում և զարգանում է, հետևապես լեզուն իր զարգացման տարբեր շրջաններում կարող է ունենալ իրարից տարբերվող հնչյունական համակարգ։ Այսինքն՝ մի շրջանում ունեցած որոշ հնչյուններ կարող են հետագայում անհետանալ լեզվից և ընդհակառակն՝ որոշ նոր հնչյուններ կարող են առաջանալ լեզվի մեջ։

Այսպես, օրինակ՝ Ավեստայում, հին պարսկերենում կային որոշ հնչյուններ, որոնք միջին պարսկերենում և ժամանակակից պարսկերենում պահպանվել են, սակայն կան նաև այնպիսիները, որոնք այլևս չկան։

Արդ, ցույց տանք միջին պարսկերեն լեզվի հնչյունների հարաբերությունը հին պարսկերենի և որոշ դեպքերում՝ Ավեստայի հնչյուններոի հետ։

Ձայնավորներ ու երկբարբառներ

a>a օրինակ՝ հպ. hama, մպ. ham;
ā>ā „ „ kāma, „ kām;
i>i „ „ pita, „ pit;
u>u „ „ (h)uška, մպ. xušk;
a>ō „ „ fravarti, մպ. frōhar;
a>ā „ „ tač, մպ. tāxtan;
au>ō „ „ rauča, մպ. rōč;
ai>ē „ Ավ. tkaiša, մպ. kēš;
a>i „ „ haēšāza մնջին. պարսկ. bižišk («բժիշկ)»;
a>u „ հպ. fratama „ „ fratum;
ā>ū „ „ framāyam „ „ framud;
i>u „ Ավ. mizda մպ. muzd;
i>ī „ „ tiγri „ tīr;
u>ū „ „ yatu „ yatūk;
u>ō „ „ uši „ hōš:

Ձայնորգներ

Երկշրթնային շփական, ռնգային m>m, օրինակ՝ ambar—hambar:

Առաջնալեզվային շփական, ռնգային n>n, օրինակ՝nām—nāman:

Առաջնալեզվային շփական l-ն, որը բացակայում է հին պարսկերենում և Ավեստայում, հազվադեպ է գործածվել նաև միջին պարսկերենում. այն հանդիպում է հատուկ անունների, ինչպես նաև մի քանի այլ բառերի մեջ, ինչպես՝ šagal, Palang և այլն:

Առաջնալեզվային սահուն r>r, օրինակ՝ հպ. rauča—rōč: r-ից հետո եղած խուլերը միջին պարսկերենում ձայնեղանում են, օրինակ՝ vəhrka—gurg, rθ>hr, hl, օրինակ՝ հպ. parθava, մպ. Pahlava: rd>l-հին իրանական նավասարդ— «նոր տարի»>sāl—«տարի»:

Միջնալեզվային շփական ձայնորդ y>y, *օրինակ՝ Ավ.* yasna, *մպ.* yašn, *նպ.* Jāšn:

Բաղաձայններ

Աղմկային պայթական հնչյուններ

Երկշրթային *պայթական, խուլ բաղաձայն* p>p, *օրինակ՝ հպ.* pitā, *մպ.* pit «*հայր*»: **Ձայնեղ** b>b, *օրինակ՝ հպ.* bratā *մպ.* brat «*եղբայր*»:

Առաջնալեզվային *պայթական, խուլ բաղաձայն* t>t, *օրինակ՝ Ավ.* tanu, *մպ.* tan «*մարմին*». **ձայնեղ** d>d, *օրինակ՝ Ավ.* draſša *մպ.* drafš «*դրոշ*»:

Հետնալեզվային *պայթական խուլ* k>k, *օրինակ՝ Ավ.* kaēna, *մպ.* kēn «*քեն*»: **Ձայնեղ** g>γ, *օրինակ՝ հպ.* baga, *մպ.* baγ «*աստված*», *հպ.* drauga, *մպ.* drōγ «*սուտ*»:

Աղմկային շփական բաղաձայններ

Շրթային *շփական խուլ* f>f, *օրինակ՝* farr, farrox «*փառք*»: **Ձայնեղ** v>v, *օրինակ* patvastan «*պատվաստել*»:

Առաջնալեզվային *շփական խուլ* s>s, *սակայն ինչպես ցույց են տալիս հայկական համապատասխանությունները, V դարից հետո՝* s>h: s-ն *ձայնավորների մեջ տալիս է* «h», *օրինակ՝ Ավ.* dasan, *մպ.* dah «*տաս*»:

Ձայնեղ z>z, *օրինակ՝ Ավ.* hizva, *մպ.* huzvan «*լեզուն*»:

š>š *Ավ.* tašta, *մպ.* tašt «*տաշտ*»:

j>ž *Ավ.* arjah, *մպ.* aržan «*արժան*»:

Ոսորդային կամ ուվուլյար շփական, խուլ x>x, *օրինակ՝ Ավ.* xratu, *մպ.* xrat «*խրատ, իմաստություն*», *իսկ ձայնեղ* γ>v, *օրինակ՝ Ավ.* mərəγa, *մպ.* murv «*հավք*», *երբեմ* γ>y, *օրինակ՝ Ավ.* Raγa, *մպ.* Ray «*Ռեյ*», γr>r, *օրինակ՝ ավ.* tiγri, *մպ.* tīr «*նետ*»,

Շփական ð>h, *օրինակ՝ հպ.* spaða, *մպ.* spāh «*սպահ*», *Ավ.* zraða, *մպ.* zrah «*զրահ*». *ձայնավոր* + ð>y, *օրինակ՝ Ավ.* pāða, *մպ.* pāy «*ոտ*»:

θ>h և s, *օրինակ՝ Ավ.* čaθvārō, *մպ.*čahār «*չորս*», *հպ.* gāθu, *մպ.* gas «*գահ*», *Ավ.* raθa, *մպ.* rās «*ռահ, ճանապարհ*»: *Հայերենում, ինչպես նաև արդի պարսկերենում այն դառնում է «հ». օրինակ՝ նպ,* gāh, rāh, *հայերեն՝ գահ, ռահ:*

θr>s, *օրինակ, Ավ.* Puθra, *մպ.* Pus «*որդի*»։
θr>hr, *օրինակ՝ Ավ.*Puθra, *մպ.* Puhr «*որդի*»։

Կիսաշփականներ

Առաջնալեզվային, լեզվաքմային խուլ č>č, *օրինակ՝ Ավ.* čāt *մպ.* čah «*ջրհոր*»։
Ձայնեղ ǰ>ž, *օրինակ՝ հպ.* ǰiv, *մպ.* zivistan «*ապրել*». nǰ>nǰ, *օրինակ՝ ավ.* hanǰamana, *մպ.* hanǰaman «*հավաքույթ*». rǰ>rž, *օրինակ՝ Ավ.* arǰah, *մպ.* aržan «*արժան*»։

* * *

Պահլ.ավական տեքստերի ընթերցման գործը դյուրացնելու նպատակով պարսիկները երբեմն արտագրում էին տեքստերը և գոյություն ունեցող հատուկ Պահլավի բառարանների օգնությամբ այդ գաղափարագրերը փոխարինում իրենց համապատասխան պարսկական համարժեքներով։

Այս դեպքում կիրառվում էր կամ Ավեստայի, կամ էլ արաբական գրությունը։ Նման ձևով արտագրված պահլավական տեքստերը կոչվում են փազանդ։ Մեզ ավանդված միջին պարսկերեն լեզվի որոշ բնագրեր այդպիսիք են։

Ինչպես արդեն նշեցինք, պահլավական գրությունը շատ անկատար է, լեզվում եղած բոլոր հնչյունները իրենց հատուկ գրության ձև չունեն։ Առանձին գրույթներ կարող են արտահայտել մի քանի հնչյուններ։ Գրությունը ընթանում է աջից դեպի ձախ, տառերը իրար կցվում են, ըստ որում որոշ դեպքերում՝ կցվելիս ձևափոխության են ենթարկվում, դրանով իսկ նմանվում մի այլ հնչյուն արտահայտող գրույթի։ Այդ բոլորին ավելացնենք նաև գաղափարագրերի առկայությունը, որ արդեն մեծ դժվարությունների է հասցնում միջին պարսկերենի ընթերցման գործը։

Նկատի ունենալով այն, որ արամեական ծագում ունեցող հին և նոր պահլավական գրությունները լրիվ չեն արտացոլում ձայնավոր հնչյունները, պահլավական բնագրերը ի վիճակի չեն ճշտությամբ ներկայացնելու միջին պարսկերենի հնչյունական կազմը։

Այստեղ ճշտումներ կատարելու գործին մեծ սատար է հանդիսանում հայոց լեզուն և հայերենի հնչյունաբանության օգտակարությունը իրանական մթագնած բառերի վերականգնման, ըն-

թերցման ճշտումներ կատարելու գործում դառնում է ակնհայտ։ Միաժամանակ հայերենի իրանական փոխառությունների անաղարտ պահպանումը մեծ արժեք է ներկայացնում պարսկերենի հնչյունաբանության պատմության համար ընդհանրապես։

ՈՒՐՎԱԳԻԾ ՄԻՋԻՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Միջին պարսկերեն լեզուն ունի վերլուծական կառուցվածք։ Այստեղ բացակայում են հոլովի, սեռի քերականական կատեգորիաները։ Բոլոր անվանական խոսքի մասերին բնորոշ է թեքական ձևերի բացակայությունը, իսկ խոսքի մասերի շարահյուսական ֆունկցիաները արտահայտվում են հիմնականում նախդիրների, հետդիրի, իզաֆեթի և շարադասության օգնությամբ։

Միջին պարսկերենի խոսքի մասերի սիստեմի հիմնական առանձնահատկությունը կայանում է գոյական և ածական անունների ձևաբանական նույնության, որն առաջացել է հարուստ թեքականության կորստի պատճառով։

Շատ դեպքերում բառի պատկանելությունը գոյական կամ ածական խոսքի մասի հնարավոր է դառնում որոշել միայն իմաստով, քանի որ այդտեղ բացակայում են որևէ արտաքին ձևական տարբերիչ ցուցանիշները։ Սակայն որոշ դեպքերում դժվար է գոյականը որոշակի զանազանել ածականից, նկատի ունենալով նաև իմաստը, որովհետև նրանք շատ դեպքերում թե՛ կրում են միաժամանակ հատկանշի նշանակությունը և թե՛ հանդիսանում են հատկանշի կրողը։

Գոյական և ածական անունների ձևաբանական կառուցվածքը բառակազմության շատ ձևերում համընկնում է, իսկ բառակազմական ածանցների և բառակազմական մոդելների թիվը, որոնք հատուկ լինեն գոյականներին կամ ածականներին, բավականին սահմանափակ է։

Քերականական սեռ

Հնդևրոպական հիմնալեզվում գոյականները, ածականները ստանում էին սեռը որոշելու համար մի նշան։ Համաձայն սրան հնդևրոպական հիմք-լեզվի մեջ արական սեռի համար հատկացվում է o, իսկ իգականի համար՝ ā վերջավորությունը։

Հետագայում լեզուների մեջ սկսվում է սեռի կորուստը։ Քանի որ սեռի նշանը բառավերջի ձայնավորն է, իսկ հետագայում բա-

ռավերջի ձայնավորները այս կամ այն պատճառով ընկնում են, ուստի սեռի նշանն ու գաղափարն էլ անհետանում են լեզվից:

Այսպես է եղել հայերենում պատմական շրջանից առաջ: Այսպես եղավ անգլերեն լեզվում պատմական շրջանից բավական հեռո, իսկ պարսկերեն լեզվում՝ պատմական շրջանի գրեթե բոլորում:

Պարսկական սեպագիր արձանագրությունները արդեն վերջին շրջանում (IV դարում մ. թ. ա.) այնպես խառնված են, որ զգալի է, թե սեռը իր անկման շրջանն է ապրում: Քերականական սեռի ջնջումը պարսկերենում տեղի ունեցավ մակեդոնական շրջանում. հետևաբար, միջին պարսկերենը, ինչպես նաև նոր պարսկերենը քերականական սեռի տարբերակում չունեն:

Միջին պարսկերենում մնում է միայն բնական սեռը, որը որոշելու համար ծառայում են առանձին բառեր, ինչպես mart «մարդ», zan «կին», brat (ar) «եղբայր», x^uāhar «քույր». pit (ar) «հայր», māt (ar) «մայր»:

Միջին պարսկերենում հուզվարեշ բառերը ընդունում են սեռական ձևեր, որոնք, սակայն, կարդացվում են միջին պարսկերեն. այսպես, արականի համար՝ gabra, որը կարդացվում է mart «մարդ», իգականի համար՝ nīšeh, որը կարդացվում է zan «կին», [gošan] nar (արու), [dinutak] mātak «էգ». օրինակ՝ [gamlā-gošan]. uštornar «արու ուղտ», [gamlādinutak] uštormātak «էգ ուղտ»:

Սեռը որոշելու համար կարող են ավելացվել որոշ բառեր՝ nar «արու» և mātak «էգ». օրինակ՝ gāvnar «եզ»—gāvmātak «կով», x^uatāy «տեր»—katakx^uatāy «իշխան», banuk «տիկին»—katakbanuk «տիրուհի»:

Թիվ

Միջին պարսկերենում կա եզակի և հոգնակի թիվ: Երկակի թիվը, որ եղել է հին պարսկերենում, այստեղ արդեն չկա:

Միջին պարսկերենի հոգնակերտ վերջավորություններն են ān և īhā:

Շնչավոր առարկաների, կենդանիների հոգնակին կազմվում է ān վերջավորությամբ, օրինակ՝ frazandān «զավակներ», gavān «կովեր» կամ «եզներ», šapānān «հովիվներ», axtarmārān «աստղագետներ», martān «մարդիկ»:

Անշունչ առարկաները հոգնակիում ունենում են īhā վերջավորությունը. օրինակ՝ kust-kustīhā «կողմեր». kōf—kōfīha «սարեր»:

Սակայն միջին պարսկերենում հոգնակիի կազմության մեջ դիտվում են բազմաթիվ խախտումներ. երբ շնչավորը հոգնակիում ընդունում է անշունչ առարկայի վերջավորություն և հակառակը: Այսպես. urvar—urvarān «բույս—բույսեր», axtar—axtarān «աստղ—աստղեր», nēzak—nēzakān «նիզակ—նիզակներ» և այլն:

Մի շարք բառեր, որ նոր պարսկերենում o-ով են վերջանում, միջին պարսկերենում k են ունեցել: Այդ բառերը նոր պարսկերենում հոգնակիում gān-ով են վերջանում, պահպանելով միջին պարսկերենի k-ն:

Նոր պարսկերենի niyā «պապ» բառը հոգնակիում ունենում է niyąkąn, որովհետև միջին պարսկերենում եզակիում ունեցել է k վերջավորությունը: Օրինակ՝ niyak, իսկ հոգնակին ունեցել է niyākān ձևը:

Հուզվարեշ բառերը նույնպես ընդունում են իրանական հոգնակերտ վերջավորություններ, ինչպես միջին պարսկերեն բառերը. այսպես՝ [gabrā] mart «մարդ», [gabrāān] martān «մարդիկ», [malkā] šah «շահ, թագավոր», [malkāān) šāhān «թագավորներ»:

Իզաֆեթ

Երբ երկու բառ (գոյական, ածական, դերանուն և այլն) իրար նկատմամբ գտնվում են որոշյալ—որոշչի հարաբերության մեջ, նրանց ներքին կապը արտահայտվում է իզաֆեթով: Միջին պարսկերենի իզաֆեթը կարճ «i» տառն է, որ դրվում է երկու բառերի միջև և ցույց տալիս այն հարաբերությունը, որ գոյություն ունի նրանց մեջ:

Իզաֆեթը ծագում է հին պարսկական hya ձևից, որն իր հերթին ծագում է ha «այս» ցուցական և ya «որ» հարաբերական դերանուններից: Իզաֆեթը շատ կարևոր դեր ունի միջին պարսկերենում: Սեռական հոլովը արտահայտվում է իզաֆեթի միջոցով, օրինակ՝ kārnāmaki Artaxšēri Pāpakān «Արտաշիր Պապականի հիշատակարանը»: Սակայն իզաֆեթ հանդիսացող այս «i»-ն շատ դեպքերում կրճատվում է:

Միջին պարսկերենի իզաֆեթը, որը մինչև սասանյաններին

վերջին շրջանը արտահայտվում էր «i» ձայնավորով, այնուհետև նոր պարսկերենում վերածվեց «e» (է) հնչյունի և այլևս չի գրվում, թեպետ արտասանվում է:

Հոլովական իմաստներ արտահայտելու միջոցները

Հնդևրոպական հիմնալեզուն ուներ ութ հոլով, իրենց առանձին վերջավորություններով, որոնք հետագայում տարբեր լեզուների պատմական կյանքում սկսեցին աստիճանաբար կորչել: Հնդևրոպական հիմք-լեզվի հոլովները ամենից լավ են պահպանել սանսկրիտը և մի քանի այլ հին լեզուներ:

Հնագույն վիճակում հոլովների վերջավորությունները իրարից անկախ և տարբեր էին: Աստիճանաբար տարբեր հոլովների ֆունկցիաները միանում են և առաջ է գալիս մի տեսակ համատեղություն, երբ տարբեր հոլովական իմաստներ արտահայտվում են նույն վերջավորությամբ: Շփոթության առաջն առնելու համար գործածության մեջ մտան նախդիրները և հետդիրները, որոնք պարզեցրին բառի հոլովական նշանակությունը: Երբ բառերի վերջավորությունները սկսեցին ընկնել, արդեն հոլովները մեծ մասամբ անհետացան, մյուս կողմից՝ նախդիրների գործածությունը զարգացավ և, վերջապես, անհրաժեշտ դարձավ: Այսպես է օրինակ՝ անգլերենը, որը պահել է միայն մեկ հոլով (սեռական), ֆրանսերենը, որը պահել է միայն երկու հոլով: Այսպես է նաև պարսկերենը, որը ոչ մի հոլով չունի և բոլոր հոլովները կազմվում են ոչ թե առանձին վերջավորություններով, այլ նախդիրներով, հետդիրով և օժանդակ բառերով:

Արդեն հին պարսկական արձանագրությունների վերջին շրջանում հոլովական վերջավորությունները այնպես քայքայված են, որ զգացվում է հոլովման նախկին ձևի վերանալը: Արդեն այդ ժամանակ է, որ որոշ հոլովներ միացել են իրար, և սկսվել է նախդիրների գործածությունը:

Հոլովների վերջնական քայքայումը և նախդիրների կիրառությունները կատարված են ոչ թե նոր պարսկերենում, այլ միջին պարսկերենի նախորդ շրջանում, որով և հին պարսկերենից միջին պարսկերենին անցնելու շրջանի հոլովական միջին ձևերը չկան:

Այսպիսով, միջին պարսկերենը կորցնելով իր հոլովական վերջավորությունները, հոլովական իմաստները արտահայտում է

նախդիրների, հետդիրի, իզաֆեթի և շարադասության օգնությամբ։

Ինչ վերաբերում է թեքմանը, ապա միջին պարսկերենում թեքումը բուն իմաստով վերաբերում է հոգնակի ān և ihā վերջավորություններին, որոնք ավելանում են բառի հիմնական ձևի վրա։

Ուղղական հոլովը բառի հիմնական ձևն է. օրինակ՝ Sāsān hamgūnak kart (Քարնամակ),

«Սասանը այնպես էլ արավ»։

Սեռական հոլովն արտահայտվում է զանազան կերպ.

ա) Այնպիսի դասավորությամբ, որի ժամանակ խնդրառու բառը խնդրից հետո է դրվում, ինչպես, օրինակ՝ kārnāmak, Erānšahr, սակայն այսպիսի միացումները կազմությամբ բարդ բառեր են և դիտվում են որպես միասնական բառեր.

բ) Իզաֆեթի միջոցով. օրինակ՝ Kārnāmaki Artaxšēri Pāpākan «Արտաշիր Պապականի հիշատակարանը», rasi Pars «Ֆարսի ճանապարհը»։

Տրական հոլովը արտահայտվում է ō հնչյունի միջոցով. օրինակ՝ Apiš nāmak ō Pāpak kart (Քարնամակ) «Եվ նա նամակ գրեց Պապակին»։ Apiš ō pūsi Ardavan guft (Քարնամակ) «Եվ նա ասաց Արտավանի որդուն», akasih ō Ardavan mat (Քարնամակ) «Տեղեկություն եկավ Արտավանին»։

